ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/96

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝

Ա. Հովհաննիսյանի (լիազորագիր, տրված՝ 25.12.2019թ.)

Լ. Դավթյանի (լիազորագիր, տրված՝ 25.12.2019թ.)

«Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ջ. Հովհաննեսյանի (լիազորագիր, տրված՝ 25.12.2019թ.)

քննելով ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 20.12.2019թ. ներկայացված (20.12.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/96 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ֆոտոն» ՍՊԸ-ն 20.12.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների 29.11.2019թ. հայտ է ներկայացրել նաև «Ցիկլոիդ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.12.2019թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ մի շարք չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել նաև «Ցիկլոիդ» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 4 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները և սահմանվել է անգործության ժամկետ, որը հրապարակվել է 16.12.2019թ.:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) համաձայն, որակավորվում են այն մասնակիցները, որոնց ներկայացրած հայտը ամբողջությամբ բավարարում է Օրենքի պահանջներին: Ի թիվս այլ մասնակիցների գնահատող հանձնաժողովը դրական է գնահատել նաև «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը այն դեպքում, երբ «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի գնային առաջարկը սխալ է կազմված: Մասնավորապես՝ գնային առաջարկի ԱԱՀ-ի սյունակում նշված թիվը, որը պետք է կազմեր ինքնարժեք գումարած շահույթ ընդհանրական գումարի 20 %-ը, ավել է գրված բոլոր չափաբաժինների համար:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Ընկերությունը բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին մերժել «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի հայտն ամբողջությամբ, ինչպես նաև դադարեցնել 55-րդ և 63-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու մասին որոշումները:

Ի լրումն բողոքի 25.12.2019թ. ներկայացված գրությամբ Ընկերությունը հայտնել է հետևյալը.

Ընթացակարգի հրավերի թիվ 2 հավելվածի՝ գնային առաջարկի օրինակելի ձևի համաձայն՝ 6=3+4+5, այսինք ընդհանուր գինը պետք է հավասար լինի ինքնարժեք + շահույթ + ԱԱՀ:

Նույն հրավերի համաձայն՝ եթե մասնակիցը ԱԱՀ վճարող է, ապա գնային առաջարկում պետք է նշի նաև ԱԱՀ-ի գումարը: Իսկ ԱԱՀ-ն հաշվարկվում է ինքնարժեք + շահույթ * 20%-ով:

«Ցիկլոիդ» ՍՊԸ-ն թիվ 2 հավելվածով՝ գնային առաջարկով, բոլոր չափաբաժիններով սխալ է հաշվարկել ՀՀ պետ. բյուջե վճարվելիք ԱԱՀ-ի գումարը ներքոնշյալ հիմնավորմամբ:

Օրինակ թիվ 2 չափաբաժնով առաջարկվել է ինքնարժեք (320.000)+ շահույթ (179.980) * 20% պետք է հավասար (=) լինի (99,996) ՀՀ դրամի, սակայն մասնակիցը որպես ԱԱՀ-ի գումար նշել է (100.020) ՀՀ դրամ:

Նման պայմաններում ակնհայտ է, որ 6=3=4=5, այսինք ընդհանուր գինը պետք է հավասար լինի ինքնարժեք + շահույթ + ԱԱՀ չի համապատասխանում իրականությանը, քանի որ եթե իրական ինքնարժեքին գումարենք շահույթը և բազմապատկենք 20 տոկոսով ապա չենք կարող ստանալ «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նույն չափաբաժնով առաջարկված գինը (600.000) դրամը, այլ կստանանք (599.976) դրամ, որը 24 դրամով պակաս է քան ներկայացված գնային առաջարկը:

Ի դեպ, նման կերպով սխալ են ներկայացվել գնային առաջարկվող նշված բոլոր չափաբաժինները:

Ի զարմանս Ընկերության, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.12.2019թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ մի շարք չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել նաև «Ցիկլոիդ» ՍՊԸ-ն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշման գնումների գործընթացի կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող

հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով:

Վերլուծելով վերոգրյալը, Ընկերությունը գալիս է այն դիրքորոշման, որ «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկում անհամապատասխանությունները վերաբերելի չեն նշված հոդվածներին, ուստի և վերջինիս հայտը գնային առաջարկում սխալ նշելու հիմքով ենթակա է մերժման, քանի որ Կարգի 41-րդ կետի համաձայն, բացի գնային առաջարկից մնացած այլ փաստաթղթերը ենթակա են շտկման, իսկ գնային առաջարկը ոչ:

«Ֆոտոն» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 25.12.2019թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով, ինչպես նաև ի լրումն բողոքի ներկայացված դիրքորոշումը:

<u>2. ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 24.12.2019թ. թիվ 722 գրությամբ հայտնել է, որ «ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին բացի «Ցիկլոիդ» ՍՊԸ-ից «Ֆոտոն» ՍՊԸ-ն նույնպես գնային առաջարկի հաշվարկը կատարել է ընդհանուր գնի 16,67 տոկոսի դրույքաչափով, սակայն գնահատող հանձնաժողովը չի մերժել հայտերը, քանի որ դա կատարվել է որպես ԱԱՀ-ի հաշվարկ և պետական գնումների գործընթացը կարգավորող նորմատիվ իրավական ակտերում հստակ նշված չէ ԱԱՀ-ի հաշվարկման 20 տոկոսի դրույքաչափի կամ հետ հաշվարկի 16,67 տոկոսի կիրառումը: Հանձնաժողովը որոշում է կայացրել ընդունել «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները ԱԱՀ-ի հետ հաշվարկը համարելով որպես գործարար շրջանառության սովորույթ, որի կիրառումը պետության կարիքների համար ձեռքբերվող ապրանքների գնային արժեքների վրա էական շեղում չի բերում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 25.12.2019թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր

ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/96 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/96 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով մի շարք չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Ցիկլոիդ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.12.2019թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերի պահանջներին:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.12.2019թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Ցիկլոիդ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից Ընթացակարգի 55-րդ և 63-րդ չափաբաժինների մասով:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 20.12.2019թ. ներկայացված բողոքը, ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի 24.12.2019թ. թիվ 722 գրությունը, «ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած գնային առաջարկը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 2-4, 11, 13, 19-24, 26-36, 38-39, 43-44, 46-52, 54-55, 57, 63-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Ցիկլոիդ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.12.2019թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.12.2019թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Ցիկլոիդ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից Ընթացակարգի 55-րդ և 63-րդ չափաբաժինների մասով:

Նույն արձանագրության համաձայն Ընթացակարգը 1, 3-4, 8-9, 11-12, 15, 17-18, 21-35, 37-44, 49-52, 57-58, 60, 65-66-րդ չափաբաժինների մասով հայտարարվել է չկայացած:

Այսպիսով՝ ՀՀ հարկային օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ-ն հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով, բացառությամբ Օրենսգրքի 64-րդ և 65-րդ հոդվածներով սահմանված գործարքների ու գործառնությունների:

«Ցիկլոիդ» ՍՊԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով Ընթացակարգի 55-րդ և 63-րդ չափաբաժինների մասով գնային առաջարկը ներկայացրել է հետևյալ ձևով.

Չափ ա-բաժի ններ ի համ արնե րը	Ապրանքի անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
55	Հանքային ջուր	Հիսուն հինգ հազար 55 000, 00	Տասնինը հազար ինը հարյուր իննսունյոթ 19 997, 00	Տասնհինգ հազար երեք 15 003, 00	Իննսուն հազար 90 000, 00
63	Բանան	Երկու հարյուր յոթանասուն հազար 270 000, 00	Չորս հարյուր չորս հազար ինը հարյուր յոթանասուներեք 404 973, 00	Հարյուր երեսունհինգ հազար քսանյոթ 135 027, 00	Ութ հարյուր տաս հազար 810 000, 00

Ուսումնասիրելով «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի կողմից վերոհիշյալ չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկի հաշվարկը, գտնում եմ, որ այն չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ սխալ է հաշվարկված

մասնակցի կողմից տվյալ գործարքի գծով ՀՀ պետական բյուջե վճարվելի ավելացված արժեքի հարկի գումարը, որի հետևանքով նաև սխալ է ներկայացվել պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող ընդհանուր գինը: Մասնավորապես ԱԱՀ-ի գումարը չի հաշվարկվել ինքնարժեք+շահույթի քսան տոկոսի չափով, քանի որ 55-րդ չափաբաժնի մասով մասնակցի կողմից վճարկվելիք ԱԱՀ-ի գումարը կազմում է 14 999,4 ՀՀ դրամ ((55 000,0+19 997,0)*20%), իսկ 63-րդ չափաբաժնի մասով՝ 134 994, 6 ((270 000,0+404 973, 0)*20%), իսկ ընդհանուր գինը, համապատասխանաբար՝ 89 996, 4 ՀՀ դրամ և 809 967, 6 ՀՀ դրամ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ուսումնասիրվել են նաև «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի մյուս չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկները նույնպես, որոնցով մասնակիցը չի համարվել ընտրված: Ուսումնասիրության արդյունքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն արձանագրում է, որ նշված չափաբաժիններով ևս մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում առկա է անհամապատասխանություն, կապված տվյալ գործարքի գծով մասնակցի կողմից ՀՀ պետական բյուջե վճարվելի ԱԱՀ-ի գումարի չափի հաշվարկման հետ: Մասնավորապես՝ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ԱԱՀ-ի գումարը կազմում է 99 996 ՀՀ դրամ, նշված 100 020, 00 ՀՀ դրամի փոխարեն, 13-րդ չափաբաժնի մասով՝ 138 661, 12 ՀՀ դրամ, նշված 138 694, 40 ՀՀ դրամի փոխարեն, 19-րդ չափաբաժնի մասով՝ 96 396, 144 ՀՀ դրամ, նշված 96 419, 28 ՀՀ դրամի փոխարեն, 20-րդ չափաբաժնի մասով՝ 90 746, 37 ՀՀ դրամ, նշված 90 768, 15 ՀՀ դրամի փոխարեն, 46-րդ չափաբանի մասով՝ 162 493, 5 ՀՀ դրամ, նշված 162 532, 50 ՀՀ դրամի փոխարեն, 47-րդ չափաբաժնի մասով՝ 233 324 ՀՀ դրամ, նշված 233 380 ՀՀ դրամի փոխարեն, 48-րդ չափաբաժնի մասով՝ 52 497, 9 ՀՀ դրամ, նշված 52 510, 50 ՀՀ դրամի փոխարեն, 54-րդ չափաբաժնի մասով՝ 63 330, 8 ՀՀ դրամ, նշված 63 346, 00 ՀՀ դրամի փոխարեն:

Այսպիսով՝ Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Հրավերի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկները կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ նույն հրավերի 1-ին մասի 8.9 կետով սահմանված դեպքի:

Դրա հետ մեկտեղ Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով սպառիչ թվարկվում են այն դեպքերը, որոնց առկայության դեպքում մասնակցի գնային առաջարկն ենթակա չէ մերժման: Դրանք են՝

ա. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը ներկայացվել է Ընթացակարգի հրավերին

անհամապատասխան, ուստի վերջինիս հայտն ենթակա էր մերժման հայտերի բացման և գնահատման նիստում: Գտնում եմ, որ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 20.12.2019թ. ներկայացված բողոքը բավարարել.

Պարտավորեցնել ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված «ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Ցիկլոիդ» ՍՊԸ-ի հայտը գնահատել հրավերի պահանջներին չհամապատասխանող և դադարեցնել Ընթացակարգի 55-րդ և 63-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**